Նորայր Մանվելյան

Լռությանը գազել

Քշում է քեզ քոչվոր քամին, քներական լռություն,

Զգացմունքների կրքաքամին, սիրերգական լռություն,

Գրամոֆոնի զիլ նվագի, գինու գավաթների,

Այրվող մոմի փափուկ լույսի, անկողնային լռություն:

Հայացքների հանդիպումի զինաթափող հնարքի,

Ու սրտատրոփ սպասումի սարսափելի լռություն:

Անձրևի տակ թափառելիս քո համբույրները խայթող,

Փողոցային շուն ինձ դարձրին, ո'վ խանդառատ լռություն:

Կամայական հատուկ պահին բացված հոգի՜դ, լո՜ւյս իմ,

Հասկացումի և հարգանքի, դու հարազատ լռություն:

Եվ թե քամին քշի գնա անապատները հեռու,

Հոգուս խորքում կխշրտա հիշողության լռություն...